

ՆԻՑՇԵՆ ԻԲՐԵՒ ՓԻԼԻՍՈՓԱ

(Հանս Վայսհինգերի *)

Ֆրիդրիխ Նիցշեն այսօր մի առաջնակարգ գրական աստղ է: Ոչ միայն Գերմանիայում, այլև արտասահմանում նրա երկերը ախորժանքով են կարդացւում: Նիցշէի մասին գրումներինց և սրանց հերքումներինց ամբողջ կոյտ կարելի է կազմել. վերջինս վկայում է, որ նրա երկերի և մտքերի հետ մարդիկ բազմակողմանի և ինտենսիվ կերպով են զբաղւում: Բանաստեղծական գրականութիւնը և գեղարուեստը Նիցշէի այս ազդեցութիւնից խոր հետքեր են կրում: Բաւական է, եթէ այս դէպքում գերմանական հեղինակներից աչքի առաջ ունենանք Գերհարդ Հաուպտմանին, Զուդերմանին և Հալլէին, արուեստագէտներից յիշենք Կլինգերին և կատարեալ լուսթիւն պահպանենք արտասահմանեան հեղինակների մասին, ինչպէս Մետերլինկի և Գաբրիէլ դ'Աննունցիօի, կամ Շտրինդբերգի և Բրանդէսի մասին: Նոյնիսկ Իբսէնն էլ ունի Նիցշէական գծեր, թէև ձգտում է անկախ մնալ նրանցից: Աւելի երիտասարդ հեղինակներն ու արուեստագէտները, մանաւանդ նրանք, որոնց կենտրոնատեղը պարբերական «Pan» թերթն էր, Նիցշէին իրանց դրօշակակիր էին ընդունում: Գրական և արուեստագիտական ոճը արդէն անուրանալի կերպով է ազդուած Նիցշէից. վերջինիս ոճից մի շարք զարմանալի առանձնայատկութիւններ ընդունուել է երիտասարդ Գերմանիայի լեզուի մէջ, իսկ նրա հանճարեղ դարձուածքները, ինչպէս՝ «Jenseits von Gut und Böse» (բարու ու չարի միւս կողմը), «der Wille zur Macht» (ձգտումն առ իշխանութիւն), «die Viel=zu=Vielen» (սասանման շատերը), «die Umwertung aller Werte» (բոլոր արժէքների

*) Nietzsche als Philosoph, von Hans Vaihinger, Berlin, 1902, Verlag von Reuter und Reichhard.

յեղաշրջումը), «der Übermensch» (գերմարդը) և այլ նման դարձուածքներ արդէն ամենուրեք գործ են ածուում:

Որո՞նք են այս արտակարգ ազդեցութեան պատճառները. Նիցշէի երկերի մը առանձնայատկութիւնների վրայ է հիմնուած այս աչքի ընկնող յաջողութիւնը: Ահա այս հարցն էմ ես դնում: Սակայն այս հարցին կարելի կը լինի պատասխանել միայն այն դէպքում, երբ մենք կը փորձենք թափանցել Նիցշէի աշխարհայեացքի բուն՝ էական բաժինը. հէնց սրա վրայ հիմնուելով էլ կարելի կը լինի բացատրել այդ ազդեցութիւնը: Ես չեմ ուզում ոչ ներքող ձօնել Նիցշէին, ոչ էլ նրա դէմ որոտալից կշտամբական ճառ ուղղել—իմ ցանկացածը լոկ այս է. փորձել ըմբռնել նրան և նրա փիլիսոփայութիւնը ըստ ծագման և հէնց այդպիսով էլ հասկանալ նրա ազդեցութիւնը:

Նիցշէի մասին գոյութիւն ունեցող շատ գրուածքներ բընականաբար աւելի շատ սրանց հեղինակների կարծիքն են արտայայտում, քան Նիցշէի առանձնայատուկ մտաւոր աշխարհի զուտ-օբյեկտիւ նկարագիրը տալիս:

Աւելի հեշտ է Նիցշէի «անբարոյական» վարդապետութեան վրայ ունեցած բարոյական ցասումը ճարտասանօրէն արտայայտել, կամ թէ նրա ուսմունքը առանց քննադատելու երկինք բարձրացնել, բան այս նոր հայեացքները իրանց ներքին կապակցութեամբ և պատմական պատճառաբանութեամբ բացատրել: Որքան էլ շատ անհամակրելի կողմեր ունենայ Նիցշէի վարդապետութիւնը, այնուամենայնիւ ես պիտի քննեմ նրա դոգմաները նոյն սառնասրտութեամբ, որով ընախոյզը բացատրում և վերլուծում է բնութեան որևէ երևոյթ, որքան էլ սա անհաճելի, նոյնիսկ սարսափելի լինի: Ես չեմ ուզում իմ անձնական դատողութիւնը ուրիշի շինքին կապել, այլ ուզում եմ սեփական կարծիքիս համար անհրաժեշտ հիմքեր ձեռք բերել:

Անտարակոյս մի այսպիսի անաչառ նկարագրութիւն ըստինքեան անհասանելի իդէալ է, որովհետև մտքերի ընտրութիւնը և խմբակցումը արդէն ազդուած է լինում նկարագրողի անձնատրութիւնից: Սակայն ես պիտի փորձեմ այնուամենայնիւ մերձենալ վերը յիշած իդէալին. ես կամենում եմ Նիցշէի վարդապետութիւնը ինչպէս մի ուրուած նկար յետ տալով բանալ և այդ կատարել sine ira et studio, ինչպէս հին պատշաճ առածն է ասում:

Ուրեմն ես ցանկանում եմ Նիցշէի փիլիսոփայութիւնը օբյեկտիւ կերպով նկարագրել: Սակայն ահա հէնց սկզբից իմ

առաջ ցցուում են երեք առարկութիւններ, որոնք ձգտում են արգելել ընդհանրապէս լրջօրէն մերձենալու այս թեմային: Այս երեք առարկութիւնները գուցէ որոշ չափով մակերևոյթային են, սակայն ես պիտի դրանց յետ մղեմ, նախ քան կը վստահանամ մտադրութիւնս իրագործելու:

Շատերն ասում են. «Նիցշէն լոկ մի մոդային հեղինակ է (Modeschriftsteller)». անցեալ օրը նոյնը Շոպենհաուերն էր, երեկ Հարումանը, այսօր Նիցշէն, վաղը կամ միւս օրը մի ուրիշը կը լինի: Արժէ միթէ զբաղուել այսպիսի անցողական երևույթներով, որոնց օրուայ մոդայի քմահաճոյքը կարճ ժամանակով հետաքրքրութեան կենտրոնումն է դնում և ապա շուտով, իբրև մի խաղալիք, դէն շարտում ու ազահուլեմամբ նորի յետևից ընկնում: Մի րոպէ ենթադրենք, որ այս առարկութիւնը ճիշտ է. սակայն էլի կարելի է մի շատ հետաքրքիր և նշանակութիւն ունեցող հարց առաջարկել. ապա ինչո՞ւ է Նիցշէն մոդային հեղինակ դարձել. տարեկան հարիւրաւոր փիլիսոփայական գրուածքներ են լոյս տեսնում, ինչո՞ւ դրանց միջից հէնց Նիցշէի երգերն են ընդհանուրի ուշադրութիւնը գրաւել:—Ինչ որ «մոդա» է դառնում, պիտի առանձին որոշեալ յատկանիշներ ունենայ, այլապէս նա «մոդա» էլ չէր դառնալ: Սակայն «մոդա» խօսքը ընդհանրապէս մի վտանգաւոր բան է. երբ որեւէ մէկը մի նոր երևոյթի «մոդա» անունը կ'պնդում է և դրանով ամեն ինչ վերջացած համարում, նա այդպիսով գործին անտեղեակ մարդկանց աչքին իրօք որ հիմնական և մաքուր անձնաւորութիւն է երևում, բայց յաճախ սրանց տակ թաղնուած է լինում թերի հասկացողութիւն, կամ ծոյլ հեղգութիւն: Երբ Դեկարտի փիլիսոփայութիւնը փափաղում էր մուտք գործել գերմանական համալսարաններում, որոնք այն ժամանակ, որպէս ամենուրեք, դեռ ամբողջապէս սքոլաստիկական էին, արխատտելիզմի գատագոյները անուանեցին այս նոր՝ ամբողջ գիտութիւնը բեֆորմի ենթարկող փիլիսոփայութիւնը կրկին մի լոկ «մոդա» և դեռ աւելի ևս սաստկացրին այդ յանդիմանութիւնը, անուանելով այն էլ «օտար մոդա»: Մի ժամանակ կարծում էին, թէ «մոդա» խօսքով Շոպենհաուերին էլ կ'ոչնչացնեն—սակայն նա դեռ մինչ այսօր ապրում է և միշտ էլ կ'ապրի:

Երկրորդ առարկութիւնը հետեւեալն է. ասում են, որ Նիցշէն ամենեւին փիլիսոփա չէ, քանի որ նա փիլիսոփայութեան մի ներդաշնակ և լրիւ սխտեմ չէ տուել, որ չարժէ զբաղուել նրա մտքերով, որոնք թէև հանճարեղ, բայց և այնպէս սխտեմազուրկ են և հակասութիւններով լի: Եթէ մենք նոյնիսկ ըն-

դունելու լինինք այս առարկութիւնը, այնուամենայնիւ նա մնում է շատ մանրակրկիտ. արդեօք Նիցշէի մտքերը մի անաշու սխտեմ են ներկայացնում, թէ չէ—դա երկրորդական հարց է մի ուրիշ հարցի դիմաց, թէ այդ մտքերը արդեօք նշանաւոր և ծանրակշիռ են. Բուսսօն նոյնպէս փիլիսոփայական «սխտեմ» չէ տուել, բայց և այնպէս նրա գաղափարները ամենազգալի կերպով են ազդել եւրոպական մտքի վրայ: Միթէ Մոնտէն ու Պասկալը, լա Բոշֆուկօն և Վովկենարզը տեղ չունին փիլիսոփայութեան պատմութեան մէջ, չնայած որ սրաք շրջափակ սխտեմներ չեն տուել: Հէնց որ Համանն ու Լիխտենբերգը սխտեմատիկներ չեն, ուրեմն ուշադրութեան արժանի չեն:

Երբորդ և ակներև ամենավատթար առարկութիւնը պարզօրէն հետեւեալն է. ասում են, որ Նիցշէն հիւանդ հոգու տէր մարդ է, որ խելագարի մտքի արտադրութիւններով զբաղուելը ոչ մի նպատակ չէ ներկայացնում: Այս առարկութիւնը ևս թեթեամիտ է. իրաւ է, որ Նիցշէն վերջ իվերջոյ հոգեկան նուաղութեան ենթարկուեց, սակայն այս հիւանդութիւնը երեւան եկաւ միայն 1889 թւականին, երբ նա իր երկերը արդէն հրատարակել վերջացրել էր: Շումանի երաժշտութիւնը և Հոլդերլինի բանաստեղծութիւնները կլասսիկական են հաշուով, թէպէտ և երկուսն էլ հոգեկան խաւարի մէջ գտան իրանց վախճանը.—Սակայն այս առարկութիւնը կարող է այժմ էլ մի ուրիշ ձև ընդունել. «Թէև Նիցշէի հոգեկան հիւանդութիւնը միայն 1889 թւին երեւան եկաւ, սակայն արդէն առաջուց լծագնուած կեցողով գոյութիւն ունէր նրա մէջ և այս անորմալ հոգեկան կազմի հետքերը պարզօրէն երևում են դեռ 1889 թւից առաջ լոյս տեսած երկերի մէջ: Եթէ մենք համաձայնելու էլ լինինք այս առարկութեան հետ, այսուամենայնիւ սա շատ մակերևոյթային առարկութիւն է. առաջին՝ որ նշանաւոր մարդկանց կեանքում և գրուածքներում ոչ սակաւ երևան են գալիս պատողութեան գծեր, օրինակ Բուսսօի. նորմալ՝ ու անորմալ՝ ը յաճախ հէնց նշանաւոր մարդկանց մէջ մի տարօրինակ խառնուրդ է կազմում, բայց դա առիթ չէ տալիս կասկածելու այդպիսի հանճարեղ էակներին նշանակութեան մէջ:—Սակայն առհասարակ յանդգնութիւն է որևէ մէկին հիւանդոտ լինելու մէջ մեղադրել լոկ այն պատճառով, որ սա իր կարծիքներով հանդերձ միջակութիւն չէ ներկայացնում: Զգուշանանք այս մեղադրանքից, ապա թէ ոչ նոյնիերպ կարող են փոխադարձաբար մեղ յանդիմանել. ինքը Նիցշէն նախատում է մեր դարը՝ մատնանիչ անելով կամքի այլասեռումը և նոյնիսկ տկարութիւնը և ուզում է ցոյց տալ դէպ կազդուրումը տանող ուղին: Զափազանց

հեշտ է հիւանդ անուանել նրանց, որոնք այլ կարծիքներ ունին, և նոյնքան էլ դժուար է ճշգրիտ կերպով հաստատել, թէ ինչը պիտի «հիւանդ» և ինչը առողջ համարել:

Ուրեմն այդ երեք առարկութիւններն էլ մեզ չեն շեղիլ մեր խնդրից. մենք կարծում ենք, որ Նիցշէի և Նիցշէական շարժմանը պիտի լրջօրէն վերաբերուենք. այսպիսով ոչ թէ միայն շահաւետ, այլև մի շատ նշանաւոր թեմայ է մեր առաջ. մենք պիտի հաշիւ տանք մեզ Նիցշէի աշխարհայեացքի և կենսահայեացքի վերաբերեալ, որպէսզի այդպիսով սովորենք հասկանալ նրա ազդեցութիւնը:

Նիցշէի յաշոգութիւնը բացատրւում է զանազան շարժառիթներով. մի շարժառիթ աւելի սրա վրայ է ազդում, մի ուրիշն էլ աւելի ազդում է միւսի վրայ, սակայն կայ մի հանգամանք, որ ամենի, նոյնիսկ Նիցշէի հակառակորդների վրայ էլ անդիմադրելի հրապոյրով է ազդում. դա ձեն է: Ոճի վերաբերեալ Նիցշէն մի առաջնակարգ արուեստագէտ է. արդ՝ շատերը հէնց լոկ ձեով այնպէս են կաշառւում, որ բացարձակօրէն հաւանութիւն են տալիս նաև բովանդակութեանը: Կան մարդիկ, որոնք չափազանց վառվռուն ճաշակ ունին լեզուի գեղեցկութեան և ոճի ձևի վերաբերեալ. հէնց արուեստագէտների և հեղինակների մէջ է տարածուած այս ոճապաշտի տիպը (Stilgourmand): Նիցշէնի կողմնակիցներից շատերը երևի պարզօրէն չեն էլ գիտակցում, որ նրանք աւելի յարգում են Նիցշէ-արուեստագէտին, քան Նիցշէ-փիլիսոփային:

Նիցշէի ոճի առանձնայատկութիւնները ես կը նկարագրեմ շատ կարճաբօտ կերպով. Նիցշէն տիրապետում է լեզուին հազւագիւտ հմտութեամբ. նա գիտակից գիտաւորութեամբ գործ է ածում փայլուն ոճի բոլոր հնարքները. նա հարուստ է զրաւիչ անտիթեզերով, սքանչելի պատկերներով, պատշաճ նորաւիզում խօսքերով և անսպասելի բառախաղերով. նա հասկանում է մինչ ուժգին կայծակն ու որոտը ամբառնալու արուեստը նոյնպէս, որպէս և կամացորէ կանարկելու, յանկարծակի համբրանալու և լռելու արուեստը. նա կենդանութիւն է տալիս խօսքին երբեմն հարցական, երբեմն էլ հրամայական դարձուածքներով: Հնադարեան և նորագոյն ճարտասանութեան բոլոր գործիքներին նա տիրապետում է, որպէս քաջ վարպետ:

Ոճի այս փայլուն յատկութիւնները Նիցշէի երկերի մէջ երևան են գալիս մասնաւանդ այն ժամանակուանից, երբ նա սկսեց աֆորիզմներով գրել: Աֆորիզմներում ոճի այս առաւել-

լուծիւնները ընդունակ են աւելի ուժգին կերպով երևան գալու, քան թէ կապակցեալ խօսքի մէջ: Աֆորիզմները հէնց իրանք են պահանջում, որ իրանց կարելոյն չափ շատ յղկեն. չափազանց հակիրճ լինելով, նրանք պահանջում են, որ ձևի վրայ կենտրոնացուի կարելոյն չափ մեծ ուշադրութիւն. և Նիցշէն քաջ գիտէր հէնց աֆորիզմի մէջ գործադրել այդ բոլոր ճարտասանական հնարքները:

Սակայն թէև նոյնիսկ աչքի առաջ չառնենք աֆորիզմներին վրայ գործադրուող, սրանց ձևը նրբացնող արուեստը, ըստ էութեան սրանք ոճի համար ազդեցիկ միջոց են. ծանրակշիռ փնտռանքների հետ ի միասին նրանք ունին նաև շատ բնորոշ առաւելութիւններ: Առանձին մտքերը հէնց իրանց մերկութեան, կղզիութեան մէջ աւելի ուժեղ և փքուն են երևում, քան թէ այն ժամանակ, երբ նոյն այդ մտքերը ուրիշների հետ մի ներդաշնակ շարք են կազմում: Աֆորիզմներում ամեն մի առանձին միտք նախընթացով պատճառաբանուած չէ և ոչ էլ կարող է հետևեալով մեղմանալ. սաստիկ միակողմանի լինելով, այդ միտքը կարծես քառսիցն է բղխում և հէնց այդպիսով էլ մեզ վրայ աւելի ուժգին է ազդում: Այսպիսի կարճ դարձուածքները, մանաւանդ երբ նրանք արտասանուած են մարդաբանական խօսքի նշանակութեամբ և շքով, մարդու աւելի են ստիպում խորհրդածութիւնների մէջ ընկնել, քան թէ այդ ընդունակ են անել երկար ու բարակ մանրամասնութիւնները: Նիցշէն կարծես կրօնի հիմնադիր լինի. նա լոկ այսպիսի կարճաօտ առածներով է խօսում: Սրանք կտրուկ, բնագրի խօսքեր են, որոնց վերաբերեալ ծաղրական դիտողութիւններ անելու մէջ ամեն մէկը մի տարօրինակ պատրանք է գտնում: Նիցշէն առաջին գրուածքները դեռ երևան չեն հանում այս ցեղարուեստական ձևը. վերջինս նա սաստիկ զարգացնում է միայն 1876 թ. ըսկած: Այսպիսով Նիցշէն կարիքից ստեղծեց մի առաքինութիւն, ահա թէ ինչպէս. նախ սաստիկ գլխացաւը ստիպում էր նրան երկար զրօսանքների կատարել, որոնց ժամանակ կամ որոնցից յետոյ նա իր մտքերը մէկիկ-մէկիկ նշանաւում էր. վերջը Նիցշէն եկաւ այն եզրակացութեան, որ ինքը աֆորիստիկի տաղանդ ունի. և ահա նա սկսեց գիտակցօրէն՝ ճիգ թափել ոճի այս չափազանց ազդու ձևի վրայ, որի վերաբերեալ նա անշուշտ ցմիշտ պիտի վայելի կատարելութեան դափնին:

Աֆորիստիկի այս դուռ հոետորական ճարպկութեանը և նրբութիւններին այս դէպքում միանում է նաև ընաբերգութեան աստեղծի արուեստը: Նուրբ յղկած աֆորիզմներ լա Բոշֆուկօն և Պասկալը, Լիխտենբերգը և ըստ պատահման Շոպեն-

հառւերն էլ էր գրում: Սակայն Նիցշէն գերազանցում է դրանց — նա նաև քնարերգու բանաստեղծ է: Նիցշէի ոճի այս քնարերգական գիծը նրա գրուածքներում ամենուրեք երևան է գալիս թէ՛ յաճախակի յուզումների, թէ՛ նրա խօսքին յատուկ կրքի տապի և թէ՛ այն սուբյեկտիւ գոյնի մէջ, որով նա կարծես ամեն ինչ ներկում է: Նիցշէի բոլոր կարծիքները ապացուցանում են, որ նրա «ես»-ը շատ հարուստ է տեմպերամենտով: Այդ աֆորիզմները ներկայացնում են հեղինակի ներքին կեանքի, նրա անձնական վշտերի և ուրախութիւնների պատկերը, իսկ քնարերգական տարրը երբեմն այն աստիճան է բարձրանում, որ ձևակերպուած, կատարեալ բանաստեղծութիւնների է հասնում. ուր արձակ գրելու ձևը չի յաջողում, Նիցշէն բանաստեղծականին, վառվռուն երգերին է դիմում: Վերջինս տեղի է ունենում գլխաւորապէս նրա գլուխ-գործոցի՝ «Այսպէս էր ասում Զրադաշտ»-ի մէջ, ուր կան մտքի—քնարերգութեան վառվռուն և խորիմաստ նմուշներ, որոնք յիշեցնում են Զիորդանօ Րիուսօին և Հոլդերլինին:

Քնարերգականին այժմ միանում է և մի ուրիշ շարժառիթ, որով Նիցշէն ամենանպաստաւոր կերպով շփուում է նորագոյն գրականութեան մի քանի հոսանքների հետ. դա սիմվոլիզմն է: Վերջինս երևան է գալիս էլի գլխաւորապէս նրա գլուխ գործոցի՝ յայտնի «Այսպէս էր ասում Զրադաշտ»-ի մէջ: Զրադաշտի հէնց իրա տեսքն ու պատմութիւնը մի սիմվոլ է Նիցշէի համար, մի բանաստեղծական հնարք, մի այլաբանութիւն. Զրադաշտի անձնաւորութեան մէջ Նիցշէն կենդանի պատկերացում է տալիս թէ՛ իրան և թէ՛ իր իդէալներին. նրա պատահաբերում Նիցշէն իր հետ եղած գլխաւոր փոփոխութիւններն ու հոգեկան ցնցումներն է երևան հանում, նոյնպէս և իր հոգու աններդաշնակութիւնները և նրանց լուծումը իր ներքին աշխարհում: Սակայն այս այլաբանութիւնը երբեք չոր ու ցամաք, կրթիչ առակի ձև չէ ընդունում, այլ մնում է մի կենդանի սիմվոլ: Միւս կողմից այս այլաբանութիւնը երբեք ամբողջապէս չէ պարզում, կամ ձանձրալի դառնում. նա մնում է ակնարկի կիսախաւարում, լոկ փայլիլում է և այդպիսով սիմվոլիստական է մնում: Սիմվոլի այս կիսախաւարը երբեմն այնքան է թանձրանում, որ առեղծուածական միստիցիզմի է հասնում. այստեղ խօսքով արտայայտուածի յետևում բացւում են աւելի խոր, աւելի խորհրդաւոր բաժիններ:

Նկարագրելու ձևին վերաբերեալ թւած առաւելութիւնները Նիցշէի բարեկամների ցուցակը զգալի կերպով մեծացրել են, ինչպէս արդէն նկատեցինք: Նա դիտմամբ կանգ առայ

Նախ այս ձևական կողմի վրայ, որպէսզի յետոյ սա չխանդարէ ինձ, երբ կը դիմեմ Նիցշէի վարդապետութեան զուտ բովանդակութեանը: Եթէ խստիւ դատենք, չէ՞ որ մեզ համար միայն բովանդակութիւնն ունի արժէք:

Ի՞նչի են պէտք ձեռն վերաբերեալ բոլոր հմտութիւնները, եթէ բովանդակութիւնը նշանաւոր չէ. չէ՞ որ վերջիվերջոյ որեւէ հեղինակի յաջողութիւն բացատրուում է նրա գրութեաների լոկ նշանաւոր բովանդակութեամբը. մենք աչքի առաջ անջատուում ենք ոճի ձևից, որպէսզի կենտրոնացնենք մեր ուշադրութիւնը փիլիսոփայական, էական բաժնի վրայ: Անշուշտ՝ Նիցշէի վերաբերեալ սա բնաւ հեշտ բան չէ. ոչ մի տեղ նա իր վերջնական սկզբունքները սխառեմատիկաբար չէ արտայայտել. աւելի շուտ կարելի է ասել, որ նրա հայեացքները ըստ երևոյթին անկապ կերպով ցրուած են հաղաբաւոր աֆորիզմների մէջ, և այս աֆորիզմները փայլում են անթիւ երգիներանգ գոյներով և հակասութիւններով, միշտ նորանոր անսպասելի լոյս են տարածում: Սակայն ես գտնում եմ, որ այս ըստ երեւոյթին անհամար գոյների խաղը կարելի է վերածել մի քանի սակաւաթիւ, յաճախակի երևան եկող առանձնայատկութիւնների. ըստ իս՝ Նիցշէի երկերի տեսակարար (spezifisch) կողմը գլխաւորապէս եօթն առանձնայատուկ զծերից է կազմուած: Նախ՝ ես Նիցշէի այս եօթը բնորոշ յատկանիշները ի ցոյց կը դնեմ ու յետոյ կը փորձեմ նրանց մի ընդհանուր սկզբունքի վերածել:

Հասարակութեան լայն խաւերում Նիցշէի վարդապետութիւնից լոկ այն է տարածուած, որը հէնց նրա սեփական սրամիտ դարձուածքով կարելի է անուանել—ուսումն քարու ու չարի միւս կողմի մասին» և որը կայանում է հետեւեալում. Նիցշէն պնդում է, որ բարու ու չարի գործածական որոշումը խախտում հիմքերի վրայ է դրուած. նշանակում է, որ նա ժխտում կամ աւելի ճիշտ՝ յեղաշրջում է մինչ այժմ գոյութիւն ունեցող բարոյագիտական սկզբունքները, որ բարոյականը նա «անբնական» է անուանում և դրա փոխարէն մասնանիշ է անում «գերմարդի» բնական բարոյագիտութեան վրայ. գերմարդը անուշադիր թողնելով «կեղծ-բարոյագիտական» դատողութիւնը՝ անսահման կերպով օգտուում է իր բնական զգացումից—«ձգտումն առ իշխանութիւն»-ից: Այն, ինչ որ ամբողջ «բարոյագիտութիւն» է անուանում և սրբի տեղ պաշտում, ըստ Նիցշէի մի ջնչին կուռք է, որին ուժեղը և շիտակը արհամարհում է: Նա չէ ընդունում բարու ու չարի աւանդական որո-

շումը: Այս տենդենցը հակա-քարոյագիտական կարելի է ա-
նուանել. ինչպէս ասացինք, հասարակութեան լայն խաւերը
լոկ սրա հետ են ծանօթ: Բայց այս հակա-քարոյագիտական
տենդենցը միայն մի փոքրիկ հատուած է նրա ամբողջ վար-
դապետութիւնից. իրօք Նիցշէն առաւել ևս բազմակողմանի է,
կամ—եթէ գործածենք նրա մի բառախաղը—առաւել ևս բազ-
մալար էակ է: Նրան անուանում էին «բազմահնչիւն էակ»
(polyphone Natur). յիշաւի, բացի այդ վերը յիշած տենդենցից,
նրա գրուածքներում կարելի է որոշել էլի մի շարք այլ հո-
սանքներ, որոնք միայն իրանց ամբողջութեամբն են տալիս
Նիցշէի բնաւորութեան և վարդապետութեան լրիւ պատ-
կերը:

Այդ առաջին տենդենցին — հակաքարոյագիտականին ազ-
գակից, բայց բնաւ նոյնանման չէ Նիցշէի ուսման երկրորդ
տենդենցը՝ հակա-սոցիալիստականը. Նիցշէն կատաղի հակա-
ռակիրդ է անհատի համար հնարած այն բոլոր կապանքներին,
որոնք առաջ են գալիս հասարակութեան և տէրութեան միջո-
ցով: Սոցիալիստները (նրա կարծիքով) ձգտում են՝ ոչնչացնելով
անհատի ձեռներէցութիւնը՝ ապագայում ընկերավարական դար-
ձընել բոլոր գործօնները, որպէսզի այդպիսով այն կարծեցեալ
թաւանումի առաջն առնեն, որին ենթարկւում են մարդիկ ա-
մենաուժեղ անհատների միջոցով: Նիցշէն բարոյգում է դրահա-
կառակը, որ կուտուրան միայն առանձին անհատների վրայ է
հիմնուած, որոնք ամբողջ հպատակեցնում են իրանց. նրա
կարծիքով մարդիկ գոյութիւն ունին միայն հնազանդութեւլու և
տիրապետութեւլու համար և կարիք ունին այնպիսի գերութեղ
անձնաւորութիւնների, որոնք ներշնչում են նրանց իրանց սե-
փական ցանկութիւնները: Մարդկութեան փրկութիւնը Նից-
շէն սպասում է ոչ թէ ամբոխից, այլ միայն ուժեղ անհատնե-
րից, եռանդուն, ինքնաճանաչ անձնաւորութիւններից. սակայն
վերջիններս ունին իրանց սեփական դրոշմը, որի խիստ ար-
տայայտիչ գծերը ջնջուած չեն. այսպիսի անհատները չեն
ծաղկում սոցիալիստական հասարակութեան մէջ և ոչ էլ առ-
հասարակ այնպիսի մի միացեալ տէրութեան մէջ, որպիսին այ-
ժմ սովորաբար իդէալ է հաշւում. ժամանակակից տէրութիւնը
իր անհաշիւ և անհատի իրաւունքները սահմանափակող օրէնք-
ներով մեծ մարդկանց զարգացմանը արգելք է հանդիսանում.
սրանք միայն ապատութեան մէջ են ծաղկում: Հակա-սոցիա-
լիստական տենդենցը այս մտքով վերջիվերջոյ հակա-քաղաքա-
կանի գոյն է սաանում և նոյնիսկ հակում դէպ անիշխանա-
կանութիւնը:

Սակայն սխալուած կը լինէր նա, ով որ այս անիշխանական անհատականութիւնը ռամկավարականի տեղ կ'ընդունէր: Աւելի ճիշտ՝ Նիցշէն առհասարակ կատաղի հակառակորդ է ռամկավարութեան, իսկ ազնւականութեան ամենավառ պաշտպանը. այսպիսով մենք մերձենում ենք երրորդ գլխաւոր տենդենցին՝ հակա-ռամկավարականին:

Թէ ինչ կարծիք ունի Նիցշէն մասսաների մասին, մենք արդէն քիչ առաջ լսեցինք. նա նրանց ընդունում է լոկ այս յայտնի վիրաւորական դարձուածքով. «անսահման շատերը» (die Viel=zu=Vielen): Գոյութեան կուռի մէջ մասսան ըստ Նիցշէի լոկ թնդանութային նիւթի դեր է կատարում. նա ծառայում է միայն սակաւաթիւ լաւագոյն անհատներին փայլ տալու համար. վերջիններս աւելի ուժեղներն են, որոնք իրաւամբ են իշխում և թոյլերին ճնշում: Նիցշէի այս ազնւականական տենդենցը կապ ունի այն հաւատի հետ, որը նա տածում է դէպի գոյութեան կուռի կատարելագործող ոյժը: Կեանքը ներկայացնում է բոլոր արարածների միմիանց դէմ մղուող մի կուռ, և այս bellum omnium contra omnes-ի մէջ յաղթում է աւելի ուժեղը. այս յաղթութեամբ նա աւելի է շատացնում իր ոյժի առաւելութիւնները. հէնց ինքը ընտելութիւնը այսպիսով մի ազնւապետական հիմնարկութիւն է: Այս նոյն կարծիքն ունի Նիցշէն նաև կուռ'տուրայի պատմութեան և պայմանների վերաբերեալ. աւելի ուժեղի իրաւունքը այստեղ ևս նրա համար ընական է:

Ազնւապետական սկզբունքի, այսինքն աւելի ուժեղ անհատի իրաւունքը շեշտելու հետ կապ ունի մի ուրիշ դիժ, որը թէև այնքան էլ նշանաւոր չէ, որքան միւսները, սակայն ընդունութեան տեսակէտից յետ չէ մնում նրանցից. — աւելի ուժեղ անհատի իրաւունքը, որն ունի տղամարդը կնոջ վերաբերեալ: Չէ որ տղամարդը աւելի ուժեղ անհատ է, քան կինը: Այս պատճառով Նիցշէն ընդհանրապէս կատաղի հակառակորդ է նաև կանանց ազատագրութեանը: Եթէ միայն կանանց սեռի այս ազատագրական ջանքերը ֆեմինիզմ կարելի է անուանել, Նիցշէն ամենավառ հակաֆեմինիստն է, որ կարող է գոյութիւն ունենալ: Սա նրա չորրորդ ընդունող դիմագիծն է: Նա այն կարծիքին է, որ կինը ընտելութիւնից ստեղծուած է որպէս աւելի թոյլ էակ, որ նա նշանակուած է ծառայելու համար: Նիցշէն նոյնիսկ գովում է Ասիայում ընդունուած կանանց ստրկութիւնը: Վատ համբաւ ունի նրա հետեւեալ աֆորիզմը. «Դու գնում ես կանանց մօտ. մտրակդ չմոռանաս»: Սա միայն մի հզրակացութիւն է Նիցշէի ընդհանուր սկզբունքից, որով բը-

նուութիւնը ուժեղին ստեղծել է իշխելու համար. կնոջ մէջ սա-
թուութիւն է գտնում և բացի այդ՝ բոլոր այն մոլութիւնները,
որոնք բղիտում են թուութիւնից: Կանանց օրէցօր յառաջադի-
մող ազատագրական շարժման մէջ, այսինքն՝ կինը որ ձեռ-
տում է ազատուել տղամարդու ստրուկ լինելուց, այս իսկ
շաժման մէջ Նիցշէն տեսնում է այժմ տիրող այլասեռման ապա-
ցոյցներէից մէկը: Սակայն չպէտք է կարծել, որ Նիցշէն սովո-
րական ձևով է յարձակւում կանանց վրայ. չպէտք է կարծել,
որ նա էլ, կանանց ազատագրութեան հակառակորդներէի պէս
համեմատում է տղամարդու ինտելլեկտը կնոջ ինտելլեկտի հետ
և առաջինը անելի բարձր դասում ու գովաբանում: Այսպիսի
առօրեայ պատճառաբանութիւններով մի Նիցշէն չէ զբաղւում,
մանաւանդ որ նա ընդհանրապէս ինտելլեկտի շատ էլ կողմը-
նակից չէ. ընդհակառակն, նա անելի բարձր է դասում կամքը.
նրա կարծիքով մտաւոր լոյսը վտանգ է սպառնում բնազդա-
կան կամքի էներգիային: Մի խօսքով՝ Նիցշէն հակա-ինտելլեկ-
տուալիստ է, և այս նրա էութեան հինգերորդ գլխաւոր գիծն
է: Ժամանակակից այլասեռման գլխաւոր պատճառը նրա կար-
ծիքով թաքնուած է ինտելլեկտի բարձր և կամքի ցածր գնա-
հատման մէջ: Ուր ինտելլեկտն է իշխում, այնտեղ նրա դրժ-
գունութիւնը շփուելով կամքի բնածին ոյժի հետ՝ թուլացնում
է բնազդումի հուրը: Նիցշէն այս հակա-ինտելլեկտական տեն-
դենցը սաստկանալով՝ հասնում է երբեմն այն աստիճանին, որ
նա սկսում է արհամարհել գիտութիւնը, մի բան; որ արդէն
հակա-տրամաբանօրէն է. երբեմն էլ սկսւածօրէն ծաղրում է
«ճշմարտութեան» ձգտելը, որովհետև նրա կարծիքով ճշմար-
տութիւնը սպանիչ է, լուկ փայլն է կեանքին նպաստում:

Ով որ այստեղ նշմարելու լինի մի յոռետեսական գիծ,
նա չարաչար կերպով պիտի սխալուի Նիցշէնի բուն կարծիքի
մէջ: Հասարակութեան լայն խաւերում սաստիկ տարածուած է
այն նախապաշարումը, իբր թէ Նիցշէն յոռետես է: Այս կար-
ծիքը ամբողջապէս սխալ է, այնպէս որ ճշմարիտը ուղղակի
դրա հակառակն է. իրօք Նիցշէն ամենաուժեղ լաւատեսն (հա-
կա-յոռետեսն) է, որ կարող է գոյութիւն ունենալ: Այժմ իրստ
տարածուած յոռետեսութիւնը ըստ Նիցշէնի մեր կուլտուրայի
ճնշուած դրութեան մի լատկանիշն է. կեանքի մէջ յուսահա-
տուելու կամ նրա արժէքները ժխտելու դէպքերին Նիցշէն նա-
յում է որպէս նեխման երևոյթի վրայ. ընդհանրապէս ժխտու-
մը բոմանտիզմին է յատուկ, և այս տեսակէտից Նիցշէն իրան-
անուանում է հակա-բոմանտիկ: Այս լաւատեսական տեն-
դենցը նրա աշխարհայեացքի վեցերորդ բնորոշ յատկանիշն.

է: Սա չէ նշանակում, թէ նա ուրանում է չարիքները. չէ. նա դրա համար շատ շիտակ անձնաւորութիւն է. ընդհակառակ Նիցշէն մարդկանց ներքին ու արտաքին ցաւերի հետ աւելի լաւ է ծանօթ, քան մի որեւէ ուրիշը, բայց ողորմելի թուլութիւն է համարում ցաւերի պատճառով կեանքը ժխտելու կեանքը պիտի սիրել նախ հակառակ նրա վշտերի և յետոյ այդ վշտերի պատճառով. վշտերը և նրանց յաղթահարելն են միայն կեանքին արժէք տալիս: Ուժեղը արիարար յաղթում է ցաւն ու վիշտը. նա ընդունում է կեանքը, նա նոյնիսկ ցանկանում է, որ կեանքն անդադար կրկնուի: Այս մտքով Նիցշէն ուսուցանում է բոլոր «իրերի յաւիտեան կրկնողութիւնը»: Նա ասում է, որ մահուան հետ ամեն ինչ վերջացած համարելը և դրանով ուրախանալը հիւանդոտ երեւոյթ է: Իրօք՝ ուժեղը ցանկանում է իրերի անդադար կրկնուելը, կեանքի նոյն խաղի վերադարձը. նա ուրախանում է՝ տեսնելով, որ բնութիւնը խիստ ճշտապահութեամբ որոշ ժամանակամիջոցը անցնելուց յետոյ նորից ու նորից առաջ է բերում ճիշտ նոյն աշխարհը նոյն մարդկանցով, նոյն ուրախութիւններով ու վշտերով:

Այսպիսով Նիցշէն ուղղակի «յաւիտեան կեանք» է երազում. սակայն որչափ սա տարբերւում է այն գաղափարից, որը այս խօսքերի հետ կապում է կրօնը: Քրիստոնէութիւնը յատկապէս յաւիտենական կեանք է խոստանում նրան, ով որ այս անցողական կեանքում իր մարմինը ի խաչ է հանում, ով հրաժարւում է իր ինքնասէր ծնից և հետևում ընդհանուր մարդասիրական պատուիրանին—ուրեմն ով ուղղակի Նիցշէի գովաբանածի հակառակն է անում: Այս պատճառով նրա երկերում ուժգին հակա-կրօնական և յատկապէս հակա-քրիստոնէական տոնոսն է իշխում. սա նրա վարդապետութեան 7-րդ լատկանիշն է: Վոյտերից և Ֆոնբախից իվեր կրօնը և յատկապէս քրիստոնէութիւնը Նիցշէից աւելի խիստ և անողորհ հակառակորդ է ունեցել. նա մի երկասիրութիւն ունի «Նեո» (Antichrist) վերնագրով. սա պարունակում է իր մէջ քրիստոնէութեան դէմ ուղղուած այնպիսի խիստ հայհոյանքներ, որոնց նմանը դժուար է գտնել: Եւ բնականաբար Նիցշէն քրիստոնէութեան մէջ պիտի տեսնի մի շատ ուժեղ պարիսպ, որը իր սեփական վարպետութեան դէմ է շինուած. չէ որ քրիստոնէութիւնը հակառակ է այն բոլոր տոնոսներին, որ մենք Նիցշէի մէջ տեսանք: Ձգայական աշխարհի վերաբերեալ քրիստոնէութիւնը յոռետես է, նա ռամկավարական է, նա սոցիալիզմի և ֆեմինիզմի հետ ազգակից է, սակայն Նիցշէի աշխար-

հայեացքից նա տարբերում է գլխաւորապէս բարոյագիտական սկզբունքով. քրիստոնէութիւնը ուսուցանում է սէր, կա-
կարեկցութիւն, ասկետիզմի հասցրած անձնուրացութիւն. նա
պատուիրում է մանաւանդ խնամք տանել խեղճերի ու հիւանդ-
ների վրայ և հոգալ թոյլերի ու թշուառների համար: Քրիստո-
նէութիւնը ուժեղի իրաւունքը չէ ընդունում, այլ ակելի շատ դրա
հակառակը. նա ընդունում է, որ թոյլը իրաւունք ունի ակ-
նածութիւն և կարեկցութիւն պահանջելու: Այսպիսով Նիցշէն
հետևողական լինելու համար այլասեռման սկզբնական արմատը
պիտի տեսնէ քրիստոնէութեան մէջ: «Ուր քրիստոնէութիւնը
յաղթում է», ասում է Նիցշէն, «այնտեղ թոյլերի և ստրուկների
մասսան յաղթում է ուժեղներին, որոնց բնութիւնը ստեղծել է
հէնց մասսաների վրայ իշխելու համար: Այս մտքով Նիցշէն մի
վատահամբաւ դարձուածք է գործածում քրիստոնէութեան
վերաբերեալ. նա վերջինս անուանում է «Sklavenaufstand der
Moral» (բարոյագիտութեան ստրուկների ապստամբութիւն) և
աշխատում է պատմութեան վրայ հիմնուելով ապացուցանել,
որ քրիստոնէութիւնը նախ ստրուկներն են ընդունել ու տարա-
ծել: Ստրուկների այս կրօնը և բարոյագիտութիւնը բնականա-
բար հռչակում էր լոկ այն առաքինութիւնները, որոնք կարող
էին նպաստել ստրուկներին. սրանք են՝ կարեկցութիւն, սէր և
ակնածութիւն. քրիստոնէութիւնը սպառնալով արգելում է պատ-
ւազրկութիւնը, եսասիրութիւնը և անգթութիւնը: Նիցշէն աս-
ում է, որ քրիստոնէութիւնը հէնց այս վերջին նախատական
խօսքերը հնարել է, որպէսզի անարատ մարդկանց բնական ա-
ռաքինութիւններին կպցնի, նրանց վատաբանի: Այս բնական
առաքինութիւնները ըստ Նիցշէի հետևեալն են—արիութիւն, ե-
ռանդ, փառասիրութիւն, ձգտումն առ իշխանութիւն: Ահաւա-
սիկ նախնի աղգերի, երևելի յոյների և հռովմայեցիների առա-
քինութիւնները. առանց այս առաքինութիւնների հռովմայեցոց
տէրութիւնը չէր կարող հիմնուել: Բայց երբ ստրուկները և
սրանց նոր քրիստոնէութիւնը այդ առաքինութիւնների դրոշմը
փոխեցին և մոլութիւն անուանեցին նրանց, երբ քրիստոնէու-
թեան միջոցով բնական արժէքները սխալ, անբնական յեղա-
շրջման ենթարկուեցին, այն ժամանակ այդ հոյակապ հռովմէ-
ական տէրութիւնը հողի հետ հաւասարուեց և հնադարեան
կուլտուրան չքացաւ: Այդ պատճառով հարկաւոր է այժմ յեղա-
շրջել այն բոլոր արժէքները, որոնք քրիստոնէութեան երևան
գալուց ի վեր նշանակութիւն են ստացել և այդպիսով վերա-
կանգնել բնական արժէքները: Ահաւասիկ այս եօթներորդ հա-

կա-քրիստոնէական տենդենցով մենք վերադառնում ենք դէպ առաջինը, դէպ հակա-բարոյական տենդենցը:

Այժմ այս հակա-բարոյական տենդենցը, որը Նիցշէի մա-սին խօսք եղած ժամանակ ընդհանրապէս մեն-մենակ է հրա-պարակ նետւում, կազմում է ազգակից տենդենցների շղթայի մի օղակը. նա կարծես Նիցշէի առանձնայատուկ հոգեկան հիւսուածքի լոկ մի թելն է կազմում:

Յիշեալ 7 թելերը այդ հիւսուածքի ամենազլխաւոր թելե-րն են. դեռ շատ աւելի նուրբ թելեր էլ կան, որոնք տարօրի-նակ կերպով ազդում են հիւսուածքի ընդհանուր գոյնի վրայ: Սակայն այս աւելի նուրբ թելերը ես ստիպուած եմ անուշա-դիր թողնելու: Ես բաւականանում եմ այդ եօթ ամենանշանա-ւոր տենդենցներով և մի անգամ ևս հակիրճ կերպով նրանց կը թւեմ. հակա-քարոյագիտական, հակա-սոցիալական, հա-կա-ոսմկավարական, հակա-Ֆեմինիստական, հակա-ինտել-լեկտական, հակա-յոռետեսական եւ հակա-կրօնական:

Իրօք մեր առաջ կանգնած է մի նշանաւոր, ազդու պատ-կեր: Ահաւասիկ մենք նայում ենք մի մարդու արտայայտիչ դէմքի: Այս մարդը մեծ եռանդով ներշնչուած՝ անխնայ տապա-լում է ամեն մի հեղինակութիւն և մի նոր, խստաշունչ վար-դապետութիւն է քարոզում. սա ոյժի, կորովիութեան և զօ-րութեան աւետարանն է: Զարմանալի չէ, եթէ նա ցնցում ու արթնացնում է մարդկանց հոգին—սակայն հեռու պահենք մեզ քննադատութիւնից. չկորցնենք մեր սառնարիւն և որոշ չափով պատմական դիրքը, որը մինչև այժմ մենք ընդունել ենք Նից-շէի և նրա վարդապետութեան վերաբերեալ. ընդհակառակն, աշ-խատենք նոյնիսկ ուժեղացնել այդ պատմական վերաբերումը: Հարց տանք. արդեօք պատմութեան մէջ այսպիսի վարդապե-տութիւններ էլ չմն պատահել մեզ. չէ՞ յիշեցնում մեզ Նիցշէն ուրիշ անձնաւորութիւնների, որոնք փիլիսոփայութեան պատ-մութեան մէջ այնքան արժանի են ուշադրութեան:

Այսպիսի համեմատութիւններ արդէն շատ անգամ են արուել: Նիցշէին համեմատում են յունական սոփիստների, մա-նաւանդ Կալլիկլէսի հետ, որը (Պղատոնի «Գորգիասի» մէջ) ուժեղի իրաւունքի մասին բոլորովին Նիցշէական ոգով է խօսում. ու-րեմն անիրաւացի չէ այս համեմատութիւնը: Կալլիկլէսն ասում է, որ բարոյագիտական իրաւաբանական սահմանները «չեն տրւում բնութիւնից», այլ լոկ «օրէնսդրութիւն» են. որ օ-րէնքները հիմնւում են «թոյլերի», այսինքն «վատթարների»,

«անչափ շատերի» միջոցով «ուժեղ անհատներից» պաշտպանուելու նպատակով: Սակայն ընութիւնը կամենում է, որ ուժեղները իշխեն. նա օրինաւոր է համարում, որ աւելի զօրեղ էակը որեւէ առաւելութիւն ունենայ պակաս զօրեղից: Կալիկլէսի ասելով՝ ընութեան օրէնքի հիման վրայ աւելի զօրեղը, աւելի ուժեղը «իրաւունք ունի» իրանից աւելի թոյլին ճնշելու: Այս սոփեստական հակա-բարոյագիտութիւնը բոլոր իրաւագիտական և բարոյական օրէնքները անբնական շղթաներ է անուանում, ուժեղ անհատը կտրտում է այդ շղթաները առանց տատանուելու և միաժամանակ մաքուր խղճով, որովհետեւ նա լոկ ընութեան կամքն է կատարում:

Նիցշէին համեմատում են նաև ուրիշների հետ, օրինակ՝ ցինիկներին. նրա ուղղութիւնը ուղղակի անուանում էին «նոր ցինիզմ»: Ուրիշները սկեպտիկներին հետ են համեմատում Նիցշէին, օրինակ Անաքսարխի (Պիբրոսի ուսուցիչ) հետ, որը ուղեկցում էր Ադեքսանդր մեծին սրա աշխարհակալական արշաւանքների ժամանակ, իսկ յետոյ, երբ այս թագաւորը բարոյապէս ընկել էր, աշխատում էր համոզել նրան այն ցնորքի մէջ, որ նա գերմարդ է և իրաւունք ունի ձգտել անսահման ոյժ ձեռք բերելու:

Երբ Նիցշէին համեմատում են ուրիշների հետ, մատնանիշ են անում նաև միջնադարեան ոճրագործների (Assassin) վրայ, որոնց հետ Նիցշէն գիտակցաբար կապ ունէր. չէ՞ որ նա յաճախ առաջ էր բերում նրանց հետեւել առածը, թէ՛ ճշմարիտ բան չկայ, ամեն ինչ թոյլատրուած է:

Կան նաև այնպիսիները, որոնք մատնանիշ են անում վերածնութեան դարի մարդկանց վրայ, օրինակ՝ Մակիաւելլիի, Ագրիպպ ֆոն Նետտեսհայմի և Մոնտենի հետ են համեմատում Նիցշէին: Իր «գերմարդկանց» նախատիպը Նիցշէն ինքը նրանց մէջ էր փնտրում: Նրան համեմատում են նաև Հորդէսի հետ:

Շատերն էլ 18-րդ դարի լուսաւորիչներին մէջ են փնտրում Նիցշէի նախորդներին. յիշեցնում են՝ օրինակ՝ անգլիացի Մանդելլիլին, Ֆրանսիացի դը Լա Մետրիին և նրա աշակերտներից մարկիզ դը Սադին, ուրիշներն էլ յիշեցնում են Վոլֆե-նարդին: Շատ յաճախ Նիցշէին համեմատում են նաև Բուսսօի հետ, Ֆրանսիացի այն գրողի հետ, որը քաղցում է մարդկանց, որ նրանք մոլորութիւններից և անհամ կուլտուրայի ալլասեռումից յետ դառնան դէպի ընութիւնը:

Այս նոյն ժամանակամիջոցում Գերմանիայումն էլ գոյութիւն ունէր մի շարժում, որի ներկայացուցիչների հետ համեմատում են Նիցշէին. սա բուն ձգտումների, հանճարների և

սրանց յատուկ բարոյագիտութեան ժամանակամիջոցն է, որի ազդեցութեան տակ էր նաև երիտասարդ Գեորգէն:

19-րդ դարն էլ ունի այնպիսի երևոյթներ, որոնց վրայ մատնանիշ են անուամբ, երբ Նիցշէին համեմատում են ուրիշների հետ. օրինակ՝ մատնանիշ են անում մանաւանդ Ֆիխտէի եւսի վարդապետութեան կից բոմանտիզմի վրայ, որը իր տիպական արտայայտութիւնը ստացել է Շլեգելի վատահամբաւ վէպի՝ «Լիւցինդա»-ի մէջ. Յիշեցնում են նաև «Դեռահաս Գերմանիան», Գուցկովի երիտասարդական վէպ «Վալլի»-ն, Մունդի «Աստուածամայրը» և այլ ուրիշները:

Վերջապէս Նիցշէին շատ յաճախ համեմատում են Մաքս Շտիրների հետ, որը Հեգելի դիալեկտիկան գործ էր ածում Ֆոբերբախի մարդկութեան փիլիսոփայութիւնը ծաղրելու համար, իսկ վերացական «մարդկութիւն» գաղափարի տեղ առանձին-հան էր դնում. սա երևան է գալիս Շտիրների այժմ կրկին տարածուած գրուածքի մէջ, որը կրում է «Անհատն ու նրա սեփականութիւնը» վերնագիրը. վերջինս ծրագիր է դարձել այսպէս կոչուած «Բարձր անիշխանականների» համար, որոնց առաջնորդ Կրապտովինի հետ Նիցշէին էլի արդէն համեմատել են:

Իրօք սա մի հետաքրքիր և հարուստ ցուցակ է, ուր երեւան են գալիս Նիցշէի նախորդների անունները: Այս ցուցակը միաժամանակ ուսուցանում է, որ Նիցշէին մենք չպիտի ընդունենք լոկ մի խենթի տեղ, կամ—ինչպէս մի քանիսն են անում—ամբարիշտ մարդ համարենք նրան. աւելի շուտ հետեւալը կարելի է ասել. Նիցշէն ներկայացուցիչ է մի այնպիսի ուղղութեան, որը ժամանակից ժամանակ կուլտուրայի պատմութեան մէջ էլի նորից երևան է գալիս և այն էլ սովորաբար որպէս մի ծայրայեղ բէակցիա՝ ուղղուած մարդկային հասարակութեան միջոցով անհատի վրայ բարձած կուլտուրական պահանջների դէմ. մի խօսքով՝ սա բնութեան բէակցիան է կուլտուրայի դէմ:

Սակայն ես այս մտքով այժմ այլևս չեմ կարող զբաղուել, այլ անա կը դիմեմ Նիցշէի փիլիսոփայութեան առանձնայատկութիւնները բնորոշելուն և պարզելուն: Վերելը թւած նախորդների հետ Նիցշէն իրաւ որ ամենուրեք շփման կէտեր ունի. սակայն նա դրանց և ոչ մէկի հետ էլ նոյն աստիճանի վրայ չէ կանգնած. չնայած միւսների հետ ունեցած ազգակցական (հոգեկան) կապերին, Նիցշէն ամբողջապէս մի օրիժինալ անձնաւորութիւն է: Իհարկէ, Նիցշէն հիմնովին ծանօթ լինելով յունական փիլիսոփայութեան հետ՝ ուրիշներից աւելի լաւ կարող էր գնահատել յունական փիլիսոփայութիւնը, իհարկէ՝

նա (մանաւանդ Յակոբ Բուրգհարդտի ազդեցութեամբ) ծանօթացել ու զնահատում էր վերածնութեան դարը և սրա անհատականութիւնը, սակայն ոչ այս է նրա վարդապետութեան շարժառիթը և ոչ էլ այն. սրանք միայն զարկ են տուել Նիցշէի հոգեկան զարգացմանը, որը ինքնըստինքեան բոլորովին առանձնայատուկ կերպով է կատարուել: Եւ ահա ես կը փորձեմ ցոյց տալու, թէ ինչ սկզբնական պայմաններից է յառաջացել Նիցշէի ներքին զարգացումը, որպէս նա մեզ ներկայանում է: Ես կը կամենայի սովորեցնել ձեզ հասկանալ Նիցշէի այս բնորոշ վարդապետութիւնը՝ հիմնուելով նրա ամենախոր և ամենաէական շարժառիթների վրայ:

Այստեղ ես կանխաւ կ'ասեմ, թէ ինչի մէջ պիտի տեսնել Նիցշէի փիլիսոփայութեան՝ եթէ կարելի է ասել՝ սաղմը և նրան ստորգ հասկանալու միջոցը. Նիցշէի վարդապետութիւնը Շոպենհաուերիզմ է, միայն դրական գոյնով կամ դէպի դրականը յեղաշրջած, եւ այս քանը կատարուել է Դարվինի ազդեցութեամբ:

Սա այն թեզն է, որը ես զնում եմ և որի վրայ պիտի մանրամասնօրէն կանգ առնեմ և հիմնաւորեմ նրան: Սակայն այս թեզը պաշտպանելու համար ես (թէև կարճ ժամանակով) պիտի ծանրանամ Նիցշէի նաև անձնական զարգացման վրայ:

Յայտնի է, որ Նիցշէն զարգացման մի քանի շրջաններ է ունեցել, մինչև որ հասել է իր վերջին, ուշադրութիւն գրաւող և օրիփնալ վարդապետութեանը: Ընդհանրապէս նրա զարգացման վերաբերեալ երեք շրջան են ընդունում:

Առաջին շրջանում Նիցշէին ընդհանրապէս կարելի է անուանել Շոպենհաուերի հետեւող: Այդ շրջանին պատկանում են նրա հետեւալ գրութեանը՝ «die Geburt der Tragödie» 1871 թ.ից (Ողբերգութեան ծնունդը), Unzeitgemässen Betrachtungen» (անժամանակակից դատողութիւններ) 173—1876 թ. և մանաւանդ երրորդ գրութեանը՝ «Schopenhauer als Erzieher» (Շոպենհաուերը որպէս դաստիարակ) 1874 թ.: Այս ժամանակամիջոցում Նիցշէի Շոպենհաուերիզմը իսկապէս շատ ազդուած է Բիքարդ Վալեններից, բայց Շոպենհաուերի փիլիսոփայութեան հիմնական գծերը՝ չնայած դրան՝ նրա երկերում երևան են գալիս. սրանք են՝ կեանքի մետաֆիզիկան և յոռետեսութիւնը: Նիցշէն էլ է ընդունում, որ բոլոր տանջանքների արմատը անյագ և յաւիտեան անբաւարար ցանկութիւններն են, և վերջիններիս պատճառած տանջանքներից ազատուելու միակ միջոցը

նա էլ է գտնում լուկ էստետիկական պատկերացման և վերարտադրութեան, այսինքն գեղարուեստի մէջ: Այս պատճառով նրա իդէալը արուեստագէտն է. այս իդէալը նա գտնում է Բիքարդ Վազների մէջ, իսկ գեղարուեստի իդէալը իրականացած է տեսնում վերջինիս դրամատիկական երաժշտութեան մէջ: Իր արուեստով արուեստագէտը թէ իրան և թէ իր եղբայրակիցներին ազատում է ցանկութեան և երեւկայութեան տանջանքներից (սա Նիցշէի կարծիքն է): Հէնց այս մտքով էլ Վազները Բայրութում իր տունը «Wahnfried»*) անուանեց: Գեղարուեստով յափշտակուելու պատճառը յոռետեսութիւնն է. մարդկանց առօրեայ չարքաշ կեանքի մէջ յոռետեսը միշտ տեսնում է լուկ նրանց կոյր, անյազ ցանկութիւնների և զառանցանքների նորանոր ձևերը: Գեղարուեստը մարդու բարձրացնում է. նա մեզ ազնիւ, բարի, նոյնիսկ սուրբ է դարձնում: Այս մտքով գեղարուեստը ողբերգական տրամադրութեան անհրաժեշտ լրացուցիչ մասն է կազմում. Նիցշէն էլ Շոպենհաուերի հետ միասին խորունկ մտքի և բարձր զգացումների տէր մարդկանցից պահանջում է, որ նրանք ունենան այս ողբերգական տրամադրութիւնը, որով նրանք պիտի տարբերուեն «անուղղելի», «ջղատեցուցիչ լաւատեսութեան» և «կրթութեան ֆիլիստերների» ներկայացուցիչներից. վերջիններիս տիպարը նա տեսնում է Դաւիթ Շտրաուսի մէջ: Յոյները, որոնց մօտ ծնունդ առաւ գեղարուեստը և մանաւանդ ողբերգութիւնը, նոյնպէս յոռետես էին, գոնէ ազնւականները, օրինակ Էմպեդոկլէսը: Արդարեւ՝ րացիոնալիստ Սոկրատէսը լաւատես էր, բայց չէ՞ որ հէնց այդ մարդուց էլ արդէն սկսւում է բուն յունականութեան անկումը: Բայց հէնց ողբերգական տրամադրութիւն ունեցողն է մարդկանց ճշմարիտ ուսուցիչը. այս պատճառով ամենալաւ «դաստիարակը» Շոպենհաուերն է, և որովհետեւ իսկապէս փրկիչ գեղարուեստը միայն ողբերգական է, ուստի և Վազներն է ամենալաւ արուեստագէտը:

Սակայն Նիցշէն շուտով պիտի սարսափելի կիւպով հիւսթափուէր. նա մօտ ծանօթացել էր վերջինիս «Նիքելուեզներ» օպերայով. նա կրկին տեսաւ Վազներին Բայրութում, սակայն սա նոյն մարդը չերեաց նրան. իդէալիստ Նիցշէին, որը սովոր էր իդէալը իրականութիւնից բաժանել, ըստ երևոյթին անհաճոյ էր Վազների բնաւորութեան մէջ անափառութեան և նախանձի, եսականութեան և քմահաճոյքի գծեր տեսնել.

*) Der Wahn — ցնորք, der Friede — խաղաղութիւն. Wahnfried — ցնորքների պատճառած տանջանքներից ազատուելու տեղ:

այսպիսով արուեստագետի իդէալը Նիցշէի համար խորտակուեցաւ, իսկ երբ լոյս տեսաւ «Parzifall» օպերան, այն ժամանակ խորտակուեցաւ և վազներական գեղարուեստի իդէալը, որովհետեւ ըստ Նիցշէի՝ «Parzifall»-ի մէջ Վազները մի քայլ արաւ, որը պատիւ չէ բերում մի արուեստագետի. մինչ այդ վեհ արուեստագէտը այստեղ ծուռն է չղբում եկեղեցոյ օեղանի առաջ, այսինքն ստորացնում է գեղարուեստը եկեղեցոյ միջոցով։ Վազների կեանքի կորագծի այս դարձից Նիցշէն տեղնուտեղը սառաւ. նրա մէջ կենդանի մնաց միայն կլասսիկական դարերի երկրպագուն։

Սրանով մենք անցնում ենք Նիցշէի հոգեկան աշխարհի մի հանգամանքին, որը յաճախ անուշադիր է թողնուել։ Սա այն է, որ Նիցշէն կլասսիկ լեզուաբան էր և այն էլ համոզուած, որովհետեւ իր տաք տեմպերամենտի համաձայն նա մի բանի դիմելիս կըքոտուէրեմբէր էր դիմում։ Նա պատկանում է վերածընութեան դարի այն հումանիստների թւին, որոնք չէին կարողանում ներել քրիստոնէութեանը, որ սա հնադարեան կուլտուրայի անկման պատճառը դարձաւ. նա այն հումանիստներիցն էր, որոնք իրանց սրտի խորքում դեռ «հին աստուածներին» էին երկրպագում։ Նիցշէն համեմատում է քրիստոնէութիւնը մի երկար գիշեր տևող շնասակար դողոցի հետ։ Ծանօթ լինելով հնադարեան կուլտուրայի հետ, նա գրգռում է ներկայիս «կարծեցեալ» կուլտուրայի դէմ։ Իր առաջին գորուածքում (1871 թ.) Նիցշէն ձգտում էր յունական գեղարուեստը ձուլել գերմանական նիբելունգների վրայ յօրինած Վազների երաժշտութեան հետ. սակայն նա հասաւ և այն օրին, երբ Վազները իր բարձր գեղարուեստական տաղանդը ծառայեցնում էր մի ինչ որ միջնադարեան իդէալ Պարցիֆալի։ Նիցշէն, որը ոչ միայն քաջ ծանօթ էր կլասսիկ տարրի հետ, այլ և որը շնչում էր դրանով, որի մէջ ինքը՝ այդ տարրը ապրում էր, որը հումանիստին յատուկ յամառութեամբ դէմ էր քրիստոնէութեան—այդ իսկ Նիցշէն չէր կարող այժմ չհիասթափուել Վազների մէջ. և այս հիասթափումը նրա կեանքի ամենադառն ժամանակամիջոցն է կազմում։ Ջարհուրանքով նա իր երեսը շուռ տուաւ իր մինչ այդ պաշտած իդէալից—Րիքարդ Վազներից։

Այն ծայրայեղ միակողմանիութիւնը, որը Նիցշէին ամբողջապէս բնորոշում է, այստեղ էլ ունեցաւ իր դերը. դատապարտելով Րիքարդ Վազներին, նա այլևս ոչ թէ գեղարուեստի, այլ գիտութեան մէջ էր փնտրում կեանքի իդէալը։ Ազատը և ուրիշներին ազատողը Նիցշէի կարծիքով էլ սուբյեկտիւ գրող

արուեստագէտը չէ, այլ օրյեկտիւ մտածող գիտնականը: Գիտութեան տեսակէտից նա այժմ դատապարտում է իր մինչ այդ ունեցած գեղարուեստի իդէալը և սրա շարժառիթն է՝ Շոպենհաուերի մետաֆիզիկական նրա յոռետեսութեան և նիհիլիզմի հետ միասին: Նիցշէն այժմ գոհ սրտով կանգ է առնում փորձառութեան և ճշգրիտ զննողութեան հողի վրայ. նա այժմ միայն դրականօրէն տուածն է ընդունում: Նրա զարգացման այս շրջանը անուանում են պոզիտիվիստական, կամ աչքի առաջ ունենալով, որ այդ ժամանակամիջոցում Նիցշէն փառաբանում էր գիտութեան ծառայող մարդուն—անուանում են նաև ինտելլեկտուալիստական: Այդ շրջանին պատկանում են նրա հետեւեալ գրուածքները. «Menschliches, Allzumenschliches» իր զանազան բաժիններով (մանաւանդ «der Wanderer und sein Schatten» (Թափառականը և իր ստուերը) 1886—1879 թ. նոյնպէս և մասամբ «die Morgenröthe» (Արշալոյսը) (1880/81): Այս գրուածքների մէջ խոհուն գիտութեան իդէալը հասցրած է ծայրայեղութեան: Այս իդէալը հետեւեալումն է կայանում. պիտի ընդունել միայն փորձառութիւնը և մտքի միջոցով գործադրել նրան. պիտի արտաքսել մի կողմից առհասարակ մետաֆիզիկական, իսկ միւս կողմից անհանգիստ բնազդունները, ուրեմն թողնել միայն փորձի վրայ հիմնուած մտածողութիւնը: Ինչպէս կրքոտ բնաւորութեան տէր մարդ՝ Նիցշէն այս իդէալի մէջ մի առժամանակ բաւարարութիւն է գտնում, որպէս մի բըժշկական միջոցի մէջ: Նրա աչքում ընկնում է մանաւանդ Շոպենհաուերի կեանքի մետաֆիզիկական: Նիցշէն այժմ մի զգաստ էմպիրիստ է. սակայն նա այս էմպիրիզմին էլ է կրքոտ կերպով վերաբերւում. ի՞նչ արած, նրանից միանգամայն անբաժան է այդ գիծը: Իր գրուածքներից մէկը նա նուիրում է այժմ Վոլտերի յիշատակին. նա նոյնիսկ ժուժկալ Սոկրատէսին էլ է համակրում, որին իր զարգացման առաջին շրջանում վատաբանում էր. Սոկրատէսն ու Վոլտերը ինտելլեկտուալիզմի ներկայացուցիչներ են, իսկ որովհետև ինտելլեկտի յաղթութիւնը շանակում է միաժամանակ և լաւի յաղթութիւն, ուստի ինտելլեկտուալիզմի ներկայացուցիչները միաժամանակ և լաւատեսութեան ներկայացուցիչներ են. հետեւողական լինելով՝ Նիցշէն այժմ յոռետեսութիւնից երեսը շուռ է տալիս. վերջինըս անհետանում է կամքի. մետաֆիզիկայի հետ: Նիցշէի մէջ մենք նկատում ենք և մի այլ փոփոխութիւն. մինչգեո նա իր զարգացման առաջին շրջանում Շոպենհաուերի հակա-պատմական հայեացքի ազդեցութեան տակ զանգատւում էր, որ մեր կրթութեան մէջ պատմութիւնը շատ մեծ տեղ է

բռնում, այժմ նա այլ կերպ է մտածում. իրերի և նրաց դարձացման պատմականօրէն քննելը Նիցշէի համար մի խնդիր է դառնում. սրա հետ կապ ունի և այն, որ դարվիճիզմի առաջ բերած էւոլիւցիայի գաղափարը սաստիկ հետաքրքրում և ըզբաղեցնում է նրա միտքը. նրա հետաքրքրութիւնը կանգ է առնում մանաւանդ բարոյագիտական գաղափարների զարգացման և կուլտուրայի առաջընթացման խնդիրների վրայ:

Սակայն Նիցշէի պէս մի ղիւրազգած և կրքոտ մարդ չէր կարող երկար ժամանակ կանգ առնել այս հայեցակէտի վրայ, առափարակը նրա համար չէ ստեղծուած. նրա հոգին պիտի ձգտէ կամ դէպի անսահման բարձրութիւնները, կամ ամենախոր անդունդները: Նա կրկին պիտի յետ դառնար դէպ ինք-զինքը, բայց արդէն կերպարանափոխուած: Նիցշէի ելակէտը Շոպենհաուերի վոլունտարիզմն (կամքի մետաֆիզիկան) էր. նա կրկին վերադառնում է դէպի այդ նոյն ելակէտը, բայց արդէն երկրորդ շրջանից ստացած եզրակացութիւններով ղինուած և կերպարանափոխուած:

Անցնելով երկրորդ շրջանից երրորդին՝ Նիցշէն իր հետ վերցրաւ ոչ միայն պատմութեամբ և բարոյագիտութեան ու կուլտուրայի էւոլիւցայով. հետաքրքրուելը, այլև մանաւանդ լաւատեսութիւնը, այսինքն նաև կենսութեան տրամադրութիւն և ապրելու ցանկութիւն: Այս երրորդ շրջանին պատկանում են նրա հետեւեալ գրութիւնները. «*die fröhliche Wissenschaft*» (զուարթ գիտութիւնը), 1882 թ. «*Also sprach Zarathustra*» (այսպէս էր ասում Զրադաշտը), 1883—1885, «*Jenseits von Gut u. Böse*» (բարու ու չարի միւս կողմը), 1885—1886, «*Zur Genealogie der Moral*» (բարոյագիտութեան ծագման մասին), 1887, «*Götzen dämmerung*» (?), 1888, և *Antichrist*» (նեոքր.), 1888.

Այս երրորդ շրջանում Նիցշէն այն մտքովն է Շոպենհաուերի հետևող, որ կրկին ընդունում է վերջինիս կամքի վարդապետութիւնը, իսկ գեղարուեստին նա այլևս առաջուայ պէս չէ վերաբերում, գեղարուեստը մեզ այլևս կոյր կամքի հպատակութիւնից և տանջանքներից ազատողը չէ. այս յոռետեսութիւնը, ինչպէս յիշում էք, Նիցշէն կորցրաւ երկրորդ շրջանում, իսկ վերջինիս լաւատեսութիւնը փոխադրեց երրորդին, սրա հետևանքը այն եղաւ, որ այժմ կամքը նրան այլևս կոյր, դժնդակ և փրկութեան կարօտ չէ երևում, այլ ընդհակառակը՝ զուարթ, թաւր և անընկճելի ձգտումն առ իշխանութիւն, որովհետև կեանքը ոյժ է, ոյժի գործադրութիւն է: Նիցշէն այժմ ընդունում է, որ կեանքը հիմնուած է ուժեղ լինելու,

ոյժ գործադրելու բնագլուծմի վրայ: Շոպենհաուերի «ձգտումն առ կեանք» դարձուածքը Նիցշէն փոխում է ձգտումն առ իշխանութիւնս-ի, որովհետեւ նրա կարծիքով «պարել» նշանակում է ամեն կողմից լայնացնել իր իշխանութեան սահմանները: Ոյժի կամ իշխանութեան ձգտելը բոլոր արարածների բնագլուծման ձգտումն է: Սակայն բնականօրէն այս տարբեր ոյժի ձգտողները և տարբեր ձգտումների ոյժերը պիտի միմեանց հետ ընդհարում ունենան. այս արիւնահեղ ընդհարումի մէջ գործում են ուժեղ և անդիմադրելի բնագլուծումները, որոնք բոլորն էլ բղխում են «ձգտումն առ իշխանութիւնս-ից»: Տարբեր ցանկութիւնների հէնց այս ընդհարումի մէջ էր տեսնում Շոպենհաուերը աշխարհիս չարիքը, որի նկարագրութեան մէջ նա չափ ու սահման չգիտէր և որից փրկուելու համար նա մի կողմից գեղարուեստի վրայ էր յոյս կապում, միւս կողմից ասկետիզմի վրայ: Նիցշէն ընդհակառակն կուլտուրայի սկզբունքը այժմ հէնց այդ տարբեր ցանկութիւնների ընդհարման մէջ է տեսնում: Նրա կարծիքը կարելի է գտնել մէկ էլ Հերակլիտի (Նիցշէից շատ յարգուած) հետեւեալ դարձուածքում. «կրիւր ամեն բանի նախահայրն է. ընդհարումից և կուից է բղխում ամեն մի յառաջադիմութիւն»:

Հերակլիտից աւելի մօտ է մեզ մի ուրիշ անձնաւորութիւն, որը նոյն կերպ է վերաբերում կուին, այսինքն վերջինիս մի՝ կեանքին նպաստող նշանակութիւն վերագրում. դա Դարվիշն է, որի կարծիքով գոյութեան կուր օրգանիզմների ընդհանրապէս բարձր զարգացման շարժառիթն է: Այս կուր մէջ ոյժերը բարձրանում են, իսկ աւելի ուժեղները յաղթում: Թոյլերը յետ են մղւում և ըստ արժանոյն ոչնչանում: Ըստ Դարվիշի՝ բնութիւնը կողմնակից է աւելի ուժեղի յաղթանակին. նա կատարելագործում է տեսակները ուժեղի յաղթութեամբ և թոյլի կործանմամբ: Ոճի վառվռուն թռիչքներով Նիցշէն փառաբանում է բնութեան այս օրէնքը, որի անգթութեան մէջ նա մի էապէս վսեմ և բարձրացնող բան է տեսնում:

Այսպիսով մենք գտանք Նիցշէի առանձնայատուկ աշխարհայեացքի էական մասը. սա Շոպենհաուերի կեանքի վարդապետութիւնն է, սակայն դարվիշիզմի եւ նրա գոյութեան կուր ուսուցման ւազրեցութեամբ դէպի դրականը շրջած:

Իրա Նիցշէի գրուածքներում նրա վարդապետութեան սաղմը այսպէս պարզօրէն երևան չէ գալիս, ինչպէս այստեղ. դա բնական է. չէ՞ որ Նիցշէն աֆորիզմներով է գրում. տաղան-

դը և բախտի բերմունքը ստիպեցին նրան այս ձևին դիմելու. տկարութիւնը արգելում էր նրան կապակցական ոճով գրել. այսպիսով Նիցշէն զարգացրաւ իր մէջ պատշաճ և կտրուկ դարձուածքներով իր մտքերին սուր արտայայտութիւն տալու շնորքը: Նա չէր կարող և չէր էլ ուզում իր վարդապետութեանը սխտեմատիկ ձև տալ: Արդ՝ մենք տեսնում ենք միայն նրա վարդապետութեան լոյսի առանձին կայծերը (եթէ կարելի է այսպէս ասել), իսկ ամբողջը, յատուկ էութիւնը՝ երբէք:

Կայ և մի այլ հանգամանք, որը նոյնպէս խանգարում է Նիցշէի վարդապետութեան էական բաժնի պարզօրէն երևան գալուն. սա հետեւեալն է. իր զարգացման երրորդ շրջանում Նիցշէն խօսում է թէ Շոպենհաուերի և թէ Դարվինի մասին, սակայն համարեա միշտ բանակուի տոնով: Նա զատում, ի ցոյց է հանում աւելի շատ այն, ինչ որ իրան զանազանում է այդ երկուսից, քան կապում է նրանց հետ: Նիցշէն ինքը, ինչպէս այդ յաճախ լինում է, պարզօրէն չէր գիտակցում, թէ հոգեպէս ումից է ծագում ունեցել. զգալով, որ ինքը անկասկած օրիժինալ անձնաւորութիւն է, նա աչքից բաց թողեց այն հանգամանքը, որ ամենաօրիժինալ գրողն էլ իր նախորդների հետ օրգանական կապ ունի: Նիցշէն դիտմամբ չէ ժխտում իր ծագումը, այլ ակամայ կերպով, սա շատ յատուկ է մեծ մարդկանց:

Գերմ. թարգ. օր. Ս. Ի. Ի.

(Կը շարունակուի)